Ելփին

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Խորեն Ավետիսյան

Հեռախոս՝ +37493.075577

Բնակչություն՝ 1302

Վայոց ձորի մարզի Ելփին գյուղը վերաբնակեցվել է 1828թ. ռուս-պարսկական պատերազմից հետո, պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Բրադես գյուղից տեղափոխված հայերով: Գյուղի ներկայիս անվանումը առաջացել է գյուղի տարածքում գտնվող պատմական Նրբույն-Նրբին-Էրփին-Ելփին ձևափոխությունից: Նրբույն գյուղի մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի <<Պատմություն նահանգին Սիսական>> գրքում: Ելփին գյուղից մի փոքր հյուսիս գտնվել է պատմական Նորո գյուղը, իսկ այդ գյուղից վերև Շրեստի սարի գլխին Նորոբերդը, որի մնացորդները դեռևս առկա են: Ըստ նույն աղբյուրի Ելփին գյուղի ներկայիս վարչական տարածքում են գտնվում պատմական Աղոպեն, Խնձորուտ, Կեչուտ, Ճոճանակ, Ճավաձոր, Մոխրոտ և այլ բնակավայրեր: Ելփին գյուղը գտնվում է ներկայիս Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան մասում՝ հանդիսանալով մարզի դարպաս: Հողատարածությունները ձգվում են ծովի մակարդակից 1400մ-ից մինչև 2800մ-ի սահմաններում: Բնակավայրը գտնվում է 1545մ բարձրության վրա՝ հանդիսանում է որպես սահմանամերձ բնակավայր: Այն հարավից սահմանակից է Նախիջևանի հանրապետությանը, արևմուտքից՝ Արարատի մարզի Զանգակատուն համայնքին, արևելքից՝ Չիվա համայնքին: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 280-350մմ-ի սահմաններում, կլիման՝ մեղմ է: Ամենաբարձր դրական աստիճանը արձանագրվել է +43°, ամենացածրը՝ -30°: Համայնքը մարզկենտրոնից հեռու է 25կմ, մայրաքաղաք Երևանից՝ 97կմ: Բնակչությունն ամբողջությամբ հայեր են, կրոնը՝ հայ առաքելական: Ելփին համայնքի տնային տնտեսությունների թիվը 2011թ հունվարի 1-ի դրությամբ կազմում է 259, բնակչության ընդհանուր թիվը 1389, որից տղամարդիկ՝ 704, կանայք՝ 685: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղի հյուսիսում, <<Կեչուտ>> հանդամասի ճանապարհին, <<Ելփին>> գետի աջակողմյան մասում կա հանգստյան գոտի՝ փոքրիկ լճակով ու գեղեցիկ տաղավարներով: